

*
* *

Ահա ինչ տեսակ օրէնքներ են թարգմանել վրացիները հայերէնից: Գործադրումը են այդ օրէնքները Հայաստանում: Շիրակի արձանագրութիւնները գործադրութեան ապացոյցներ են: Հաւանական է որ ճորտատիրական օրէնքները թարգմանուած լինեն Բագրատունի թագաւորների օրով. մենք տեսանք ճորտութեան հետքեր այդ թագաւորների ժամանակից:

Հայաստանի հողն էլ ուրեմն, ազատ չէ եղել ստրուկ, աշխատանքի պէս վաճառուող հողագործի հեծեծանքներից, արիւնքրտիւքից:—Իզուր էինք կարծում թէ մեր պապերը ոչ ճորտ են եղել, ոչ ճորտատէր...

Հէօ

*
* *

Է՛յ, դու ջահիլ, հպարտ հասակ,
Անցար ոսկի ամպի պէս.
Հետդ տարար երգեր ու սէր,
Տարար գարունն իմ սրտէս:

Քար կը սղմեմ սրտիս հիմա.
Կենիւմ սարերը լալու.—
—Ա՛խ, կուգես լաց, կուգես խնդա,
Անցածն է՛լ յետ չի գալու...

Ա. Խաչակեան